



ԿՈՍՏԱ ՀԱԱՐԴԱՐՁՈՒՄԵԱՆ (ԿԱՍԱՆԴՐ)

## ՍԱՄՍՈՆ

# ՅԱՅԱՍՏԱՆԻ

## ԱՆԴՐԱՆԻԿ ԴԵՍՊԱՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

### I

Հայ հոծ գաղթականութիւնը, 1918 թ. օգոստոս ամսի սկիզբներին, տառապանքից կքած, երկար ու տանջալից լեռնային ճանապարհներ կտրելով, կանգ ասաւ Համալանի եւ Բահար դիւզի ընդարձակ դաշտում: Նա գալիս էր Սալմաստից, Ուրմիից եւ Վանից: Եւ երազում էր հանգստանալ տաժանելի ճանապարհի սարսափներից՝ յարգել յիշատակը սիրելիների, որոնք ընկան դահիճ թշնամու դընդակներից եւ թշնամութեան անբաժան ընկեր համաճարակ հիւանդութիւններից, քոլերայից, տիֆից, թանքից...:

Այդտեղ, այդ հանգստեան վայրում պիտի յիշւէր եւ աղէտալի մահը սիրելի կոստի Համբարձումեանի, որ ընկաւ Մահմուդջըդ գիւղի բարձունքներում, մուրազի կէս ճանապարհն, բուռն ցանկութիւնները սրառում: «Ա՛խ, այս ժողովրդին մի հասցնեմ ապահով վայր, ել դարդ չունիմ»: ասում էր նա շարունակ եւ արթուն հըսկում ամենավանդաւոր կէտերի վրա: Այդպէս արթուն՝ մի խումբ ընկերների հետ նա ղեկավարեց իր սիրած ժողովրդին, Վանից մինչեւ իր մահւան վայրը: Ժողովուրդը հասաւ ապահով տեղ, իսկ ինքը զոհւեց նրա փրկութեան համար, պարտքի գիտակցութեան ճանապարհն:

Սակայն Բահար դիւզի այդ ընդարձակ դաշտում, բացօթեայ, կիզիչ արեւի տակ անգամ հանդիսաւ չգտաւ դժբախտ գաղթականութիւնը: «Հովանաւոր պետութիւնը» իրեն յատուկ սառնասրտութեամբ եւ օրէնքին կառչած, չոր ու ցամաք կարգադրութիւններով, դառնացրեց նրա առանց այն էլ ծանր վիճակը: Նա թոյլ չուեց գաղթականներին պատապարել գիւղերում կամ քաղաքում, եւ ոչխարի հօտի նման քշում էր մի վայրից միւսը: Առաւօտեան վաղ անգլիացի

զինւորները մտրակը ձեռներին յոդնած ժողովրդին դուրս էին բերում խմբերով, ճանապարհների վրա աշխատեցնելու, չէին ինայում նոյն իսկ կանանց, երեխաներին, հիւանդներին։ Զինւած ուժերի մեծ մասը ենթարկւեց զինաթափութեան, որից յետոյ սկսւեց կամաւորների անկանոն զօրահաւաք, երբ շատ ընտանիքներ դրկւեցին հոգատար տղամարդկանցից։ Ոչ մի միջնորդութիւն, դիմում կամ աղերսանք չէր օգնում։

Այս գառն օրերին էր, որ թէհրանում կաղմակերպւած պարսկահայ Ազգային Խորհրդի կողմից Համադան հասաւ լիազօր ներկայացուցիչ դոկտ. Յարութիւն Ստեփանեանը. մի յարգւած եւ հեղինակաւոր անձնաւորութիւն։ Նրան յանձնարարւած էր ուսումնասիրել հայ գաղթականութեան վիճակը, օգնութեան կարիքը, տեղաւորման հարցը, որբերի հաւաքման խնդիրը, բժշկական խնամքը եւ այլն։ Սակայն, բացի անմիջական բժշկական օգնութիւնից եւ որբերի հաւաքումից ուրիշ աշխատանքի կարելի չեղաւ ձեռնարկել, որովհետեւ անդիմացիները յայտարարեցին, թէ այդ հոգատարութիւնը իրենք են ստանձնում եւ թէ բոլոր գաղթականութիւնը պէտք է զնայ Բակուրա, ուր նրան կը արւի ամէն յարմարութիւն։ Ձելօների ամբողջ ցեղը, Մար-Շիմօնի հետ, ատանց կանգ առնելու շարունակեց ճանապարհը դէպի Բաղդատ, իրենց երազած վայրը, Մուսուլի շրջանում տեղաւորւելու համար, իսկ Ասորիների եւ Հայերի մեծ մասը, ինչպէս նաև Վանի գաղթականութիւնը փոխադրւեց Բակուրա։ Հայ եւ Ասորիների մի մասն էլ փոխադրւեց Դապւին։ Մի աննշան մասը միայն մնաց Համադան։

Դոկտ. Ստեփանեան կաղմակերպեց որբանոցը եւ Շաւարին հայ դիւդում, ոչ շատ հեռու Համագանից, հաւաքեց, եթէ չեմ սխալում, 200–250 որբ։ Որբանոցի ընդհանուր տնօրին նշանակւեց Արմ. Մաքսապետեանը, կառավարչուհի՝ օր. Հ. Մեծքայեանը, իսկ տնտեսական մասի վարիչ՝ Արամ Աղարէգեանը։ Որբանոցին կից բացւեց եւ գոլրոց։

Դոկտ. Ստեփանեանի հետ մէնք վաղեմի ընկերներ էինք. դեռ 1902 թ. նա քաղաքակիրթ Ամերիկան թողնելով անցել էր Պարսկաստան՝ իր բաժին աշխատանքը կատարելու Հայրենիքի վրկութեան գործում, և մինչև 907 թ. աշխատեց Ատրպատականի Հ.Յ.Դաշնակց. շարքերում՝ երեւան բերելով բեղուն գործունէութիւն։ 1907 թ. փոխադրւեց Թէհրան, որպէս Մահմէդ-Ալի շահի պալատական ատամնաբոյթը, եւ այսուեղ եւս շարունակեց իր կուսակցական եւ հասարակական գործունէութիւնը, դրաւելով պատկառելի դիրք հայ եւ պարսիկ հանրութեան աչքին։

Երկար տարիների անջատումից յետոյ մեր հանդիպումը, այն էլ այդ ուեւ օրերին, մի անակնկալ էր եւ եղաւ չափ ջերմ ու սրաս-  
չարժ։ Մեր մտերիմ խօսակցութիւնների ժամանակ յիշեցինք անցած  
օրերը, մեր կեանքի ուրախ ու տխուր զէպքերը։ Դոկտորը հաստա-  
տեց այն լուրը, որ մենք դեռ Ուրմի եղած ժամանակ ստացել էինք  
տաճիկ զինուրական հրամանատարութիւնից պաշտօնական զրու-  
թեամբ, թէ՝ «Երևանեան նահանգում իրենց կառավարութեան կող-  
մից Հայերին չնորհւած է Հայկական անկախութիւն»։ Թուրքերը  
ներփակել էին մի հեռագիր եւս, Ալէքսանդրապոլից, Տէր-Յակո-  
րեան<sup>\*</sup>) սոսորագրութեամբ, որը հաստատում էր անկախութեան փաս-  
տը։ Անհաւատալի բան էր, եւ մենք ենթագրում էինք, թէ այդ ձե-  
ւով թուրքերը ուզում էին մեզ ծուզակը ձգել։ «Սուտ է, խարում  
են, թուրք եւ այդպիսի առաքենութիւն» մրմնջում էին մեր շրո-  
թունքները։ բայց ճիշտ դուրս եկաւ, որկտորն էլ հաստատեց, որ  
թուրքերը չէին խարում։ Ի՞նչը կարող էր մեզ աւելի խելայիղ ու-  
րախութիւն պատճառել, այդ տխուր օրերին, քան այդ լուրը։ «Ա-  
զատ, Հայաստան, Հայկական կառավարութիւն» եւ այն էլ տաճիկ  
կառավարութեան կողմից ճանաչւած<sup>o</sup>։ Մենք հրճանքի մէջ էինք,  
երբ մի օր Դոկտորին բերին մի հեռագիր։ Թէ հրանի Աղդային Խոր-  
հուրդը յայտնում էր Բագուե անկման լուրը։ Ալեւս Ջիլ չկար զգա-  
լու դասնութեան ահաւորութիւնը... Ո՛չ, թուրքը այն ցեղը չէ,  
որից կարելի է բարեիք սպասել։ Մի քանի տխուր ու մռայլ օրեր եւս,  
եւ Դոկտորը, աւարտած իր դործը, ճանապարհւեց թէ հրան։ Ցրեց  
կաղթականութիւնն եւս, գատարկւեցին Համազանի եւ Բահարի ըն-  
դարձակ դաշտերը։ Ինձ էլ այլեւս անելիք չէր մնում եւ մի քանի  
գաղթական ընտանիքների հետ ճանապարհւեցի Ղազւին։

## II

Տխուր էր Ղազւին հասած հայ գաղթականութեան վիճակը։ Մը-  
րանք չենթարկւելով անդիմացիների կարգադրութեան եւ չուզենալով  
անցնել Բակուրայի անապատները, շտապում էին իրենց ծննդավայ-  
րը՝ Մարմատ-Ռուրմի վերագառնալ։ Սակայն, ճանապարհների ան-  
ապահովութիւնը ստիպել էր կանգ առնել Ղազւինում, թէ եւ երե-  
սուն հոդի ամէն վտանգ աչք առնելով՝ ճանապարհւել էին թաւրիզ։  
Մնացած գաղթականութիւնը, մօտ 800 հոգի ցըւած այս ու այն  
կողմ, զուրկ առրելու տարրական միջոցներից, յոզնած ու հիւծ-

\* ) Հայաստանի Հանրապետուրեան արտաքիմ գործոց նախարարութեան քար-  
տուղար Ալ. Տէր-Յակոբեան։

ւած, համաճարակ հիւանդութիւնների սպառնալիքի տակ, շշմել, կորցրել էր սառնասրութիւնն ու համբերութիւնը: Ղազինի հայ հասարակութիւնը անտարբեր չէր գտնւել իր թշւառութեան մատնըւած հայրենակիցների հանդէպ եւ անմիջապէս օգնութեան էր հասսել ինչով կարող էր: Օդնութեան գործը կանոնաւորելու համար ընտրւել էր զաղթականական մարմին՝ Համբ. Գրիգորեան (Նախագահ), Տիկ. Նունէ Աւագեան (Մայրիկ, Գանձապահ), Տիկ. Տիգրանուչի Բարխուդարեան, Տիկ. Նատալիա Սարգսեան, Դ. Թամբագեան: Այս մարմինը ձեռնարկել էր հանգանակութեան, որ անցնում էր աւելի քան յաջող: Սակայն այդ փոքրիկ զաղութը մենակ չէր կարող բաւարարել ահազին կարիքին եւ մարմինը դիմել էր Թէհրանի Պարսկահայ Խորհուրդին, որ ուղարկել էր մի դումար: Բայց այդքան էլ բաւարական չէր: Երբ ես հասայ Ղազին, Գաղթականական Մարմնի կողմից հրաւիրւեցի իրենց նիստերին եւ մի շարք խորհրդակցութիւններից յետոյ, լիազօրւեցի կազմակերպել օգնութեան դործը ու ստանձնել հսկողութիւնը:

Իրեւ հետեւանք այդ խորհրդակցութիւնների, վարձւեց երկու բնդարձակ բնակարան ուր տեղաւորւեցին բոլոր զաղթականները, հրաւիրւեց մի թժիչի ու բուժակ, բացւեց բուժարան եւ եղած գրամի համապատասխան որոշւեց նորաստ տալ չնչին 50 սանտիմ (10 շահի): Այսպիսով հայ զաղթականութիւնը գէթ մասամբ հանդըստացու:

Արժէ այստեղ յիշատակել եւ այն, որ Սամաստի եւ Ուրմիի հողատէր եւ առեւտրական զաղթականները, չցանկանալով նպաստով ապրել, ինդրեցին իրենց համար փոխառութիւն յաջողացնել: Նրանց դիմումը յարգւեց եւ Ղազինի հայ վաճառականները Աւետիս-իս-խան Տէր-Գրիգորեանի նախաձեռնութեամբ, տրամադրեց 1500 թուման, որ մինչեւ այսօր էլ չէ վերադարձած: Աւելորդ չենք համարում յիշատակել, որ ասորիներին, թւով մօտ 300 շունչ, անդլիացիները անմիջապէս առին իրենց խնամատարութեան ներքոյ, յիտառ պարենով հողալով նրանց բոլոր կարիքները: Մեր շարունակական դիմումն ու խնդրանքը մերժում էր անդլիական իշխանութեան կողմից, որոնք միշտ միեւնոյն պատասխանն էին տալիս. – Զեղ կարգադրւած էր Բակուրա գնալ, ինչո՞ւ չէք գնացել:

Մեր բացատրութիւններից յետոյ, երբ առևում էր թէ՝ չէ<sup>o</sup> որ ասորիներն էլ չեն գնացել, բայց օգնում էք, կոչտ ու կոպիտ պատասխանում էր.

– Ասորիները այստեղ աղջակիցներ չունեն, նրանց օգնելու կարգադրութիւն ունենք, իսկ հայերին՝ ոչ: Հայերը այստեղ հա-

բուստ հայրենակիցներ ունեն, որոնք կարող են օգնել դիմեցք նը-  
րանց :

Առհասարակ անգլիացիները բարեացակամ տրամազրութիւն  
չունէին դէպի հայերը, ինչպէս նկատում էր ամէն քայլափոխում :

Այդ ժամանակներն էր, որ Բագուից Ղալիքն հասան Ռոստոմը և  
Ա. Արարատնանը, որոնք զնում էին Թէհրան. Ռոստոմը կարեւոր  
հեռագիրներ ունէր տալու Եւրոպա, իսկ Արարատնանը, կարծիմ  
որպէս Բագուի Ազգային Խորհուրդին լիազօր, ժամանակաւորապէս  
այնտեղ պիտի մնար որոշ խնդիրների կարգադրութեան համար :

Ուրախութիւնից յուզեց՝ շտապեցի նրանց մօտ : Մահաւանդ  
անսահման երջանիկ էի Ռոստոմին հանդիպելու համար : 0', որքան  
տեսլիք կար, ինչքա՞ն զարդ ու ցաւ էր կուտակւած սրտիս վրա Ինչ-  
պէ՞ս լոել օրինակ, Ճերմակ\*) կոչւած ապիկարի զործելակերպի հան-  
դէպ, որ մեր եւ ժողովրդի թշւառութեան պատճառներից մէկը հան-  
դիսացաւ, փոխանակ դէպի Կովկաս, ընդհակառակը դէպի հարաւ-  
զալթելու պատճառը եղաւ՝ օգտւելով իր «լիազօրի»ի հանգաման-  
քից եւ զրաւելով Ամերիկեան միսիոնար եւ Դաշնակիցների ներկա-  
յացուցիչ՝ Թօկտոր Շէդի փայլուն ոսկիներից : Նա արգելք եղաւ  
մեր շատ ձեռնարկներին՝ ներքին խարդաւանքներով ու զանազան  
որոշայիններ լարելով եւ միտումնաւոր տեղեկութիւններ տալով Կով-  
կասից : Ինչպէ՞ս լոել այն վաս դաւադիրների հանդէպ, որոնք ի-  
րենց խլուրդային աշխատանքներով ոչ թէ միայն վիժեցնում էին  
համերաշխ աշխատանքը ու պղտորում հրամարակը, այլեւ դիւային  
ծրագիրներ էին մշակում կեանքից զրկելու նրանց, որոնք տարիներ  
շարունակ աշխատել են ժողովրդի համար եւ որոնց միակ հոգուը  
ժողովրդի պաշտպանութիւնն էր ու փրկութիւնը : Ինչպէ՞ս լոել այն  
զազրելի խաչադողների հանդէպ, որոնք տէր դարձած ուսւս կառա-  
վարութեան պետական բարեգործական (կարմիր խաչ, քաղաքների  
միութիւն, բարեգործականի) հիմնարկութիւնների լքւած գոյքե-

\*) Ճերմակը լիազօրւած էր Հ.Յ.Դ. Ալտրպատականի կ. Կոմիտէից որոշ բանակ-  
ցուրիմների համար, որոնք նոյնպէս ծախողեցին երա ապիկարութեան հետեւան-  
քով : Նա կավկասի էր, կարծեմ Շուշեցի, Բողեան ազգանունով, որ ախորժելի  
չինելու համար փոխել էր Ճերմակի : Թարթիցի քեմական դպրոցի հոգաբարձու-  
թեան կողմից հրամարած էր տեսչի պաշտօնով եւ իր նարպիկ բնաւորութեան եւ  
օգի լիզի շնորհիւ, կարողացի էր գրաւել տեղական ընկերների ուշադրութիւնը  
եւ օգտելով նրանց բարի եւ ընկերական տրամադրութիւնից՝ սպրդել էր բարձր  
մարմնի մէջ, որպէս անդամ, եւ ապա որպէս լիազօր անցել էր Սալ-  
մաստ :

րին, զազրելի խարէութիւններով թոյլ չտւին ոչ միայն լայն կերպով օգտագործել կրծքները թշնամուն դէմ տւած բանակի համար, այլ մինչեւ իսկ խաչաղողին յատուկ ճկունութեամբ աշխատում էին վկայաթղթեր պատրաստել պատշաճ մարմինների կողմից, այդ հառըստութիւնը թալաներու համար: Ինչպէս կարելի էր մոռացութեան տալ որոշ խմբակների քաղաքական խաղերն ու գաղտնի աշխատանքները, որոնց հետեւանքով հայ գաղթականութիւնն էլ քարշ ընկաւ մինչեւ անսպատաները: Եւ, վիրջապէս, ի՞նչպէս անսարքեր մնալ հերոսական կոփեների ու թանկապին զոհերի հանդէպ:

Օ՛, ամէն, ամէն ինչ պէտք է պատմել ու պարզաբանել Մեծ Ընկերոջ, սպասել նրա վերջին խօսքին: Սակայն նա էլ զալիս էր տառապած ժողովրդի գրկից, ծանրաբեռնւած՝ նրա վշտերով: Գալիս էր կուի վայրից, ուր մարել էին շատ թանկապին կեանքեր, ուր վերջին շունչն էր փէել հերոսին վայել մահով Սերաստացի կտրիծ թաղմիկը՝ Մուրաքը: Նրան էլ յայտնի էր Հայաստանի Հանրապետութեան ծնունդը, հայ ժողովրդի համատարած սուզի մէջ: Յուսոյ մի կայան հայ կեանքի փոթորկայոյլ ովկեանում:

Եւ նա լսեց ու նրա վշտահար ծով սիրուր յուզեց: Խաղաղ ու ժպտուն դէմքի վրա կնճիւները սեղմւեցին, եւ նա մոայլւեց: Հայ ժողովրդի թշւառութիւնը համատարած էր, վէրքը խորը, ժողովուրդը բղկաւած, տեղահան ու ցիրուցան....

Քայլում էր նա մտախոհ ու մտածկոտ փոքր սենեակում չարունակ խաղալով իր նոսր միրուքի թերերի հետ: Նրա զինուրի կոպիտ կոչիկի գրըսեկ գրըսեկոցը բնդհատում էր սենեակի լութիւնը: Եւ, յանկարծ, կանդ առաւ ուղիղ իմ դիմաց: Նրա մոայլ, ուր հայեացքը վարկենապէս ազգեց վրաս, եւ ես չփոթւածի նման մնացի սառած: «Պիտի յանդիմանի», անցաւ մտքովս:

«Ճերմակի մասին քո եւ ընկերների գժողուաթիւնը հասկանալի է, որովհետեւ այդ մարդը ընդունակ չէ նման աշխատանքներ կատարելու, բայց ո՞վ է մեղաւորը»: Այնպէս շեշտւած հարցրեց նա, որ ես այլայլւած չէի իմանում՝ ո՞ւր նայեմ: Մի ակնթարթ լութիւնից յետոյ նա աջ ձեռքի ցուցամատը ուղղելով ինձ՝ պատսախանեց՝ «Դուք»: Եւ շարունակից.

«Եթէ դուք կուսակցական կարգապահութիւն ունենայիք եւ հասկանայիք կուսակցական օրէնքները, ձեր մէջ չէիք ընդունի մի մարդու, որ եկել է առանց որեւէ յանձնաբարականի. ես զիտեմ, որ ոչ մի մարմին մեր կուսակցութիւնից յանձնաբարական չէ տեկ նրան, որովհետեւ նա Դաշնակցական չէր: Իսկ ձեր բարձր մարմինը ոչ միայն ընդունել է այդպիսի մեծամիտ, պարծենկոտ մարդուն իր

շարքերում, այլեւ բաղմեցրել է իր կողքին ու լայն լիազօրութիւն է վաստահացել նրան: Պարզ է որ նա պիտի շահագործէր այդ լիազօրութիւնը եւ յօխորսար, կաշառէր եւ վիժեցնէր ձեր ձեռնարկները, հակառակ գործէր ձեզ: Զեր բարձրագոյն մարմինը պատասխանառու է իր այդ քայլի համար»:

Ռուսոսմի նկատողութիւնը, անշուշտ, ճիշտ էր, ի՞նչ կարող էր պատասխանել, բայց գաւառում մեզ անյայտ էր այդ հանգստման քը եւ ոչ էլ ձերմակին ճանաչող կար: Անշուշտ, նա Դաշնակցական էր. առաջին իսկ օրից նա իր կեցւածքով եւ անմիտ կարդագրութիւններով իր զէմ հանեց ոչ միայն գաւառի մարմիններին ու ընկերներին, այլեւ Վասպուրականի բոլոր ընկերներին: Բացի այդ նա Համագանից անմիջապէս ճանապարհեց Թէհրան, աւելի շուտ վախուա գաղտնի, դաստի չենթարկելու համար: Թէհրանում մի քանի օր մնալով ընկերների մօտ՝ նորողեց հագուստները, ժամանակաւորապէս ապահովեց ապրուստը եւ ապա անցաւ նոր ծայր տևած հակառակորդների կողմը:

Ու Ռուսոսմի եւ Արարատեանի հետ մենք երկար խօսեցինք օրւայ հրատապ ննդիրների մասին: Նրանք շտամպում էին, մանաւանդ Ռուսոսմը, որ ցանկանում էր իր կարեւոր գործերը աւարտել եւ անմիջապէս վերադառնալ Հայաստան:

### III

Տառապանքի օրերը կարծես մեղմանում էին: Բագուի գաղթականութիւնը ինդէլիից վերադառնում էր իր արիւնոտ օջախը, զրկուած ոչ միայն սիրելիներից, այլեւ ամբողջ ունեցւածքից: Անդիտացիները այդուղի եւս ցոյց էին տեղ իրենց անրարեացակամ տրամադրութիւնը դէսի տեղահանուած հայ ժողովուրդը:

Ղարինի գաղթականութեան վիճակը փոքր ինչ աւելի բարուքիլու զիտումով մանրամասն զեկուցումով, Գաղթականական Մարմնի նախագահ Գրիգորեանի հետ մեկնեցինք Թէհրան, ուր Արարատեանի հետ ներկայացանք Պարսկահայ Աղքային Խորհրդի նիստին: Խորհուրդը լսեց մեր զեկուցումը, մանրամասն հարցերով բաւարարեց իր հետաքրքրութիւնը, զոհունակութիւն յայտնեց Գաղթականական Մարմնի կատարած աշխատանքների համար եւ ունեցած դրամի համապատասխան՝ նպաստը բարձրացրեց՝ իւրաքանչիւր չնչին մի զոան (100 անտիմ): Դժգոհ լինելու հիմք չկար: Սակայն հանգստացած, հոգեկան փոքր ինչ խաղաղած զաղթականութիւնը ունէր իր սուր կարիքները, որոնցից մէկն էր երեխաների կրթութիւնը: Տեղական ծխական դպրոցը բաւարար տեղ չունէր

ընդունելու աւելի քան 130 նոր աշակերտ-աշակերտուհի: Մտածեց առանձին դպրոց բանալ եւ այդ առթիւ խորհրդակցւեց Հ. Յ. Դ. տեղական մարմնի հետ, որ ընդառաջ գնալով՝ նշանակեց երեք հոգինոց հոգաբարձական կազմ: Ղ. Թամրաղեանին, Ս. Սուքիասեանին եւ տողերս գրողը՝ խոստանալով նաև իր բարոյական աջակցութիւնը:

Հոգաբարձութիւնը անմիջապէս դործի անցաւ եւ յաջողութիւն ունենալու համար յայտնի հարուստ Աւետիս-խան Տէր-Գրիգորեանին հրաւերեց հոգաբարձութեան պատւաւոր նախագահ, որ ուրախութեամբ համաձայնեց եւ ամենաջերմ աջակցութիւն ցոյց տևեց թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս: Կարճ ժամանակում դպրոցը բացւեց ամէն յարմարութիւն ունեցող չենքի մէջ: Դպրոցի բացման նիւթական օժանդակութիւն ցոյց տւին նաև Հայկաղ էֆինդի Գույիմձեանը, Եղբարք Թումանեանները, Միքայէլ-խան Բարխուդարեանը, Զոհրաբ-խան Զարդարեանը, Սուքիաս Սուքիասեանը եւ ուրիշները: Այս դպրոցը շարունակւեց մինչեւ զաղթականութեան վերադարձը, ամբողջ երկու ուսումնական տարի:

Հետզհետէ տարածւեցին պատերազմի վերջաւորութեան շշուկներ, որոնք չուտով դարձան իրականութիւն, բայց դրանից դրութիւնը չփոխվեց: Ներքին կեանքը աւելի վատթարացաւ. ծայր էլ տւել անիշխանութիւնը. ճանապարհները դարձան վտանգաւոր. բորբոքւած կրքերը իրենց պոոթկումներով ստեղծեցին դժւարին կացութիւն: Համեմատած ուրիշ տեղերի հետ Պարսկաստանում կացութիւնը աւելի խաղաղ էր, սակայն մենք էլ կտրւած էինք արտօքին աշխարհից, մանաւանդ մեր մանուկ Հայաստանից, եւ այդ անսահման մտահոգութիւն եւ տառապանք էր պատճառում: Երբեմն միայն Արաբատեանը կարողանում էր դեսպանատներից տեղեկութիւն ստանալ: Նա արդէն թէհրանում աչքի ընկնող զիրք էր վայելում ոչ միայն հայ հասարակութեան, այլեւ պաշտօնական շրջաններում: Նրա միջնորդութեան պէտք է վերազըել, որ անդիացիները բոլորովին անսպասիլի կերպով Ղաղփինի զաղթականների հոգատարութիւնը վերցրին իրենց վրա, բոլոր ծախսերով եւ իւրաքանչիւր չնչին տալով օրեկան մի դուն 10 շահի, որով աւելի բարուքւեց զաղթականութեան դրութիւնը: Ինձ վիճակնեց տառանձնել զաղթականների հոգատարութեան ու գործի հոկողի եւ ներկայացուցչի պաշտօնը: Ժամանակի ընթացքում, կամաց-կամաց մոռացւեցին զաղթի տանջանքներն ու հոգեկան խոռվքը: Կեանքը ըսկըսում էր մտնել իր բնականոն ընթացքի մէջ: Այժմ արդէն ապ-

րում էինք նոր յուղումներով. այնտեղ, հեռու, ծնւել էր Երեւան-հան մանուկ Հանրապետութիւնը, մեր ընդարձակ հայրենիքի մի փոքրիկ մասնիկի անկախութիւնը, ազատ Հայաստանը։ Որպիսի՛ բերկրանք ու ոգեւորութիւն։ Հայը այժմ շրջում էր բաց ճակատ ու հողարտ զգում իր յաղթանակի մեծութիւնը։

Հայկական կառավարութիւն, Հայկական զրօց, Հանրապետութեան նախագահ, նախարարութիւն, խորհրդարան, ազգային բանակ, զինուորականութիւն - բոլորը հայկական եւ հայկական օրէնքի տակ։ Երա՛զ օրեր։ Ի՞նչ գրիչ կարող է նկարագրել այդ օրերի խանդակառութիւնը։ Ո՞ր լեզուն կարող է արտայայտել հայի ազգային զգացմունքների փոթորկայոյդ վիճակը։ Ամէնքի մտքին եւ լեզուին միեւնոյն ցանկութիւնն էր տիրում։ «Դէպի Հայրենիք», «գնա՛նք ազատ Հայրենիք»։ Եւ այդ բառերը արտասանում էին այնպիսի՛ անկեղծութեամբ ու ոգեւորութեամբ . . .

Ես էլ տարւած էի Հայրենիք վերադառնալու մտքով։ Եւ մի օր քայլերս ուղղեցի դէպի անգլիական «Պոլիտկըլ ՕՓիսը», խնդրեցի ազատ թողնել ինձ պաշտօնից, որովհետեւ ցանկանում էի գնալ Հայաստան։ Զգիտեմ ինչպէ՞ս արտասանեցի այդ բառերը եւ ինչպէ՞ս թարգմանեց թարգմաներ. բայց զգում էի, որ սիրոս հանգիստ չէ. ինչ որ բան էր կատարւում այնտեղ, եւ հաճելի յուղմունքից շըրտունքներս դողում էին։

Թարգմանի խօսակցութեան ժամանակ «Պոլիտկըլ ՕՓիս»-ի պաշտօնեան պալ ժամանակ գէմքին շարունակ նայում նր ինձ. արդեօ՞ք նա զգաց իմ հոգու վիճակը, ըմբռնե՞ց իմ ցանկութեան վեհութեամբ, չդիտեմ, միայն անընդհատ նայում էր ինձ, իսկ ես՝ նրան։ Ես պատասխանը եղաւ մերժողական։ Ես վարժւած էի անգլիացու չոր ու ցամաք զգացմունքներին, բայց այդքան չէի սպասում։ Մերժումը շատ վատ ազդեց վրաս։ Տրամադրութիւնս փոխւց։ Պաշտօնեան նկատեց այդ եւ կարծես ինձ հանգստացնելու համար ասաց։

-«Այս զաղթականութիւնն էլ նոյն ժողովուրդն է և նոյնպէս պիտի գնայ Հայաստան։ Այժմ ճանապարհները խիստ վտանգաւոր են, տեղ չէք կարող հասնել։ Հայաստանի բախտը դեռ որոշւած չէ, պէտք է սպասել հաշտութեան խորհրդաժողովին։ Ես այս կարգի խօսքեր, որոնք աւելի եւս ազդեցին վրաս։ Ի՞նչ է նշանակում թէ «Հայաստանի բախտը դեռ որոշւած չէ»։ Միթէ՞ կարող է հակառակը լինել։ Միթէ՞ այդ փոքրիկ տարածութիւնն անդամ կարող են չտալ մեզ։ Միթէ՞ մեր անկախութիւնը դեռ եւս հարցական է։

Այս մոայլ մտքերով պաշարւած երբեմն յուղում էի, երբեմն

յուսադրում եւ շարունակ խարխափում էի անորոշութեան մէջ անցնող օրերի հետ։ Երբ քիչ յետոյ եկաւ Ս. Արարատեանը Հայաստան անցնելու համար, ես նորից պնդեցի Հրաժարականիս վրա, բայց պատասխանը եղաւ մերժում։ «Գաղթականութեան հետ եկել ես, գաղթականութեան հետ էլ կը գնաս»։ Եւ ես մնացի յուսահատ։

Աշնան օրեր էին։ Հետզհետէ մոայլում էր բնութիւնը։ Մոայլ էր եւ մեր սիրտը։ Անմիտիթար լուրեր էին տարածւում մեր թանկադին հայրենիքի մասին։ Զարհուրելի պատմութիւններ էին ըրջան առնում։ Պատմում էին, թէ Աղրբէջանի թուրքիրը Բագուկից ճանապարհուղ հայերին երկաթուղու վագոններից բոնի կերպով յափշտակում, գուրս են բերում և անյայտացնում։ Զայը անվտանգ ճամբորզել չի կարող այդ գծի վրա։ Թէ՝ նորարոյն Աղրբէջանեան կառավարութիւնը թշնամական դիրք է բոնել եւ նաւթ չէ ուղարկում Հայաստանին։ Թէ՝ Վրաստանի եւ Աղրբէջանի կառավարութիւնները դաշնակցած, թիկունքում ունենալով տաճիկին, օղակել են Հայաստանը ու գժւարութիւններ են յարուցանում երկաթուղիների երթեւեկութեան եւ մթերքների փոխազդութեան համար, եւ Վրաստանը թերթեւամիտ մեծամտութեամբ ամբարտաւանացած՝ յոխորսում է Հայաստանի դէմ։ Եւ ուրիշ այս կարգի յուղիչ ու վրդովեցոցիչ լուրեր։ Բայց այդ գեռ բոլորը չէր պատմում էր նոյնպէս, թէ մանուկ Հայաստանը ներքին ծանր տաղնապէ ասպրում, թէ այնտեղ սովէ է, ուտելիք դժւար է ճարտում, թէ տարափոխիկ հիւանդութիւնները համաճարակի բնոյթ ստացած բազմաթիւ զոհեր են տանում, թէ այդ զոհերի մէջ է եւ մեր անգույզական Արամը։

Արամը վախճանւած, միթէ՞ այդ ճիշտ էր։ Զէինք հաւատում։ աւելի ճիշտ՝ չէինք ուզում հաւատալ։

Արամին ես վաղուց էի ճանաչում, որ 1904 թւի աշնան վերջերից, երբ նրա երկիր անցնելը չյաջողուելով՝ Ս. Թաղէսս Առուաքեալի վանքից վերադարձաւ Սալմաստ։ Զերմ ու մտերիմ օրեր ապրեցինք բաւական ժամանակ։ Եւ ես լաւ ճանաչեցի այդ համեստ, խելացի, կամքի տէր ու գաղափարին գերի դարձած երիտասարդին, որ նոր էր ոտք դրել յեղափոխական գործի ասպարէզ եւ վճառել էր աշխատել երկրում։ Առանձնապէս շեշտած մի գիծ կար նրա գրաւիչ բնաւորութեան մէջ, որ աւելի փայլ էր տալիս նրան անսահման ընկերասիրութիւնը։ Նա ընկեր էր իսկական հասկացողութեամբ։

Որպէս յեղափոխական Արամը երկար տարիներ մնաց Վասպուրականում, մինչեւ սահմանադրութեան հռչակումը։ Եւ իր չարքաշ, տոկուն ու յամառ աշխատութեամբ աչքի ընկաւ ու ոչ միայն իր շըր-



ԵՇԱ - ՅՈՎԱՆԻՔ ԱՐԳՈՒԹԵԱՆ

ջապատի սէրն ու յարգանքը վայելեց, այլ եւ արժանացաւ կուսակցութեան մեծագոյն վասահութեան։ Տառապեց ինչպէս եւ միւս ընկերները, վատանուն դհերցի Դառոյի դաւաճանութեան հետեւանքով, բայց տոկաց յեղափոխականին վայել դիմացկանութեամբ տաճկական բանտի հրէշտոռ տանջանքներին։

Համաշխարհային պատերազմի նախօրեակին Արամը չընկաւթալէաթ-չնվէրեան արիւնոտ ծուղակը։ Նա մնաց սիրած ժողովրդոցի հետ, այդ կտրիճ ժողովրդի հետ։ մղեց Վանի հերոսամարտը եւ հիմքը զրեց Հայկական առաջին ազատ իշխանութեան՝ ուստի կառավարութեան կողմից նշանակւելով Վասպուրականի նահանգապետ։ Աւաղ, սակայն, կարճ տևեց այդ զմայլելի օրերը։ Վահասաւ տնաւեր գաղթի խուճապը։ Դատարկեց եւ ամայացաւ վարթամ Վասպուրականը։ Կործանւեց Վանը, որ անւանւում էր Հայաստանի Ժընեւը . . . .

Արամը սակայն չյուսահատւեց այդ դժբախտ հարւածից։ Նա տնձնազուութեամբ շարունակեց մնալ դիրքի վրա, մինչեւ որ դարձաւ Հայաստանի անկախութեան մեծագոյն դարբնողներից մէկը։ Եւ գեռ իր բեղուն աշխատանքը չաւարտած, գեռ չվայելած յալթանկի փառքը – փակեց աչքերը ընդ միշտ։

Տիուք ու մտահոգիչ լուրերը, մէկը միւսից սեւ, ձնշում էին ամենքիս սիրար։ Մեր օրերը անցնում էին անորոշ եւ անմիտթար։ Մէկ էլ Հայաստանի Բագուի գետպան Մարտիրոս Յարութիւնեանից տեղեկութիւն հասաւ, թէ՝ Հայաստանի Հանրապետական կառավարութիւնը Պարսկաստանի դեսպան է նշանակել Իշխան Յովսէփ Արդուքեանին։ Դեսպանը շուտով կը նանապարհի։

Հրաշալի յարութիւն էր մեզ համար։ Մռայլւած ճակատներս մէկն պայծառացան։ Լուրը կայծակի արագութեամբ տարածւեց ամէն կողմ։ Խանդակառութիւնը հայ ժողովրդի մէջ անսահման էր տեղացող հարցերը՝ անսպառ։

– Ե՞րբ կը գայ Հայոց Դեսպանը։ Կեցցէ՛ Հայոց Դեսպանը։

#### IV

Հարաւային պարսկահայութեան մեծագոյն մասի Համար անծանօթ էր նշանակւած նոր Դեսպանը։ Բայց մեզ համար նոր մարդ չէր նա։ Նա մեր Երւանդն էր, յեղափոխական, Դաշնակցական Երւանդը. Վանի Տաշօն, որ Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրութեան օրերից սկսած մասնակցել է գործնական աշխատանքներին եւ եղել զեկավար ընկերներից մէկը։ 1892 թւին աքսորից վերադառնալով՝ նա անցաւ Պարսկաստան-Արտավատական, ուր մինչեւ 1897 թ. զե-

կավարեց կուսակցական աշխատանքը : 1894-ին Պէտօի հետ անցաւ վան և 1895-ի գարնանը վերադարձաւ կարեւոր յանձնարարութիւններով :\*)

1897-ին, «Խանսասօրի Արշաւանք»-ին հաւաքւած հայդուկների կողմից ընտրեց հրամանատարի օգնական : Արշաւանքից յետոյ Սալմաստում սկսւած խիստ հալածանքների հետեւանքով ձերբակալեց պարսիկ կառավարութեան կողմից, որպէս «զաչաղ-բաշի» : Բանտում մնաց ամենածանր պայմաններում եւ ենթարկեց պարսկական բանտին յատուկ սոսկալի տանջանքներին : Ապա ոռւսաց հիւպատասի պահանջով փոխադրեց Թաւրիզ եւ յանձնեց հիւպատոսին, որի կողմից ճանապարհուեց Կովկաս եւ որտեղից ոռւս կառավարութիւնը նրան աքսորեց հիւսիս՝ Վոլոգդա քաղաքը :

Քառորդ դար առաջ նա ծագուած ու կեղծ անցագրով մտաւ Պարսկաստան իրեւ յեղափոխական : Այժմ գալիս էր յաղթական, որպէս անկախ պետութեան գեսապահ - ի՞նչ աւելի ոգեւորիչ փաստ :

Բուռն էր հայ ժողովրդի ուրախութիւնը : Համերաշխ ու միաւ բան ամենքը պատրաստութիւն էին տեսնում չքեզ ընդունելութիւն ցոյց տալու մեր նորազատ Հայրենիքի անդրանիկ գեսպանին : Հայ ժողովրդի բոլոր խաւերը՝ զաշնակցական, հնչակեան, չէզոք, մինչեւ իսկ մատի վրա համարւող ուամկալարները : Ամբողջ գծի վրա - էնզելի (այժմ Փէհլեւը), Թաշտ, Ղաղւին, Թէհրան, Հայ բոլոր համայնքները ուղքի էին ելել : Անմոռանալի օրեր էին :

\*  
\*\*

1920 թ. Դեկտ. 24-ի կէսօրին, գիշերւայ փոթորիկի պատճառով սպասւածից ուշ, էնզելիի նաւահանգիստը հասաւ եւ ափից հեռու կանգ առաւ Բագուէց եկող հսկայ նաւը : Մակոյիներով դէպի նաւը շտապեցին մաքսատան եւ անցագրային պաշտօնեաները, եւ պաշտօնական որոշ ձեւակերպութիւնից յետոյ նաւը շարժւեց դէպի քարափի, ուր խոնած էր հայերի հսկայ մի բազմութիւն : Հայ երիտասարդները շտապեցին դէպի նաւ եւ գուրս գալով ցնծութեամբ աւետեցին Հայաստանի Հանրապետութեան Դեսպան իշխան Յովսէփ Արզութեանի ժամանումը :

Ցերեկւայ ժամը մէկն էր : Լուրը կայծակի արագութեամբ տարածւեց ամէն կողմ :

\*) Նրա կենազրականում («Թրօշակ» 1925 թի № 5) գրած է «Արդուքեանը մի անգամ եւս զինած խմբի հետ անցաւ Վան» . նա երկրորդ անգամ Վան չի անցել յեղափախական շրջանում :

Ընդունելութեան կարգադրիչ յանձնախումբը եւ ինդելի հայ համայնքի ներկայացուցիչները նախադահութեամբ եւ Եսայեանի դիմաւորեցին զեսպանին նաւի վրա եւ սրտառուչ բարի գալուստ մաղթեցին։ Դեսպանին ընկերակցում էր իր ընտանիքը՝ իշխանուհի տիկ. Սաթենիկը, իր աղջիկը՝ օր. Արփիկը, խորհրդական՝ բժիշկ Բ. Յարութիւնեանը եւ զվարար քարտուղար Մուրէն Առաքելեանը։ Նաւում գիմաւորեց եւ շրջանի զատաւորը, որ կեդրոնական կառավարութեան կողմից չերմութեամբ եւ սիրով չնորհաւորեց Հայաստանի անկախութիւնը եւ զեսպանի բարի գալուստը։

Իշխանը չնորհակալութիւն յայտնեց զատաւորին ցոյց տւած յարգանքի համար, գրւատելով Հայ-պարսկական բարեկամութիւնը եւ յոյս յայտնելով, որ հետզհետէ աւելի սերտ եւ ամուր հիմների վրա կը գրւի երկու հարեւան պետութիւնների բարեկամութիւնը։ Յայտնեց նաև Հայաստանի Հանրապետութեան գոհունակութիւնը, որ Շահնշահի բարեխնամ կառավարութեան ներքոյ հայ ժողովուրդը միշտ ապրել է խաղաղ ու անդորր։

Մինչ նաւում տեղի էր ունենում պաշտօնական այս տեսակցութիւնը, դուրսը ժողովուրդը ոգեւորւած, բերկրանքով լեցւած, խումբ խումբ բանել էր այն ճանապարհը, որտեղով պիտի անցնէր զեսպանը իրեն համար յատուկ պատրաստւած բնակարանը։ Եւ ահա դուրս եկաւ նա, պարթեւ հասակով, լայնաթիկունք, բարի ու խելացի հայեցքով, վայելչակազմ մի տղամարդ, թէեւ արդէն վաթուուն գարունը անց էր կացրել։ Նրան հետեւում էին արիլին Սաթենիկը, ալէ՛ հեր մազերով, ակնոցը աչքերին, լուրջ ու խոհուն, իշխանի տառապած օրերի անբաժան ընկերը. սրա կողքին իշխանի մինուճար դուստրըը, ապա խորհրդականն ու քարտուղարը։ Նրանց շրջապատել էին կարգադրիչ յանձնախումբի անդամները եւ համայնքի ներկայացուցիչները։

«Կեցցէ՛»ն թնդացրեց օգը։ Ոգեւորւած ժողովուրդը խելայեղ մեծարանքով ողջունեց իր զեսպաննը . . . :

Հայաստանի անդրանիկ զեսպանի ժամանումը հեռագրւեց Պարսկաստանի բոլոր հայարնակ քաղաքները . . . :

Թաւրիզ

( Շարունակելի)

